



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾԱԿՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Յեռ. (0262) 6-12-09
№ 76-Ե.
14.07.2015թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐՆ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Կից ուղարկում ենք Ծակքար համայնքի ավագանու 06.07.2015թ. թիվ 10 նիստի նո. 336-39 որոշումները:

Ծակքարի համայնքի ղեկավար



Գ. Ավետիսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾԱԿՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ**

06.07.2015թ.





Հեռ. (0262) 6-12-09

գ. Ծակքար

ՈՐՈՇՈՒՄ -- 36

Ղեկավարվելով ՀՀ <ՏԻՄ> օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ, <Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին> օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ և ՀՀ <Իրավական ակտերի մասին> օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով ավագանու 05.06.2015թ. 8-րդ նիստի նո. 30 որոշումը փոխել և խմբագրել հետևյալ կերպ:




1. Հաստատել համայնքի ղեկավարի՝ համայնքային ենթակայության <Ծակքարի մշակույթի տուն> բյուջետային հիմնարկը որպես <Ծակքարի մշակույթի տուն> ՀՈԱԿ վերակազմակերպելու մասին 04.06.2015թ. թիվ 26-Ն որոշումը:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի մշակույթի տան նախկին կանոնադրությունը:
3. Հաստատել <Ծակքարի մշակույթի տուն> ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ նոր խմբագրմամբ:
4. Տալ համաձայնություն Լալա Համբարձումյանին որպես <Ծակքարի մշակույթի տուն> ՀՈԱԿ-ի տնօրեն տեղափոխելու գյուղապետի առաջարկությունը:
5. Ավագանու կողմ-4, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:
6. Որոշումը մեջ է մտնում հրապարակման պահից

1.  Ս. Ալեքսանյան
2.  Մ. Հակոբյան
3.  Ա. Խաչատրյան
4.  Հ. Այվազյան

ՈՐՈՇՈՒՄ -- 37





1. Տալ համաձայնություն Ծակքար համայնքի սահմաններում գտնվող Անժելա Համբարձումյանին պատկանող 05-045-107-077-001 կադաստրային ծածկագրով 0.65 հա գյուղատնտեսական նշանակության հողամասում քաղաքաշինական նորմերին համապատասխան գյուղատնտեսական մթերքների վերամշակող ձեռնարկություն կառուցելու նպատակով շինարարության թույլտվություն տրամադրելու համար:
2. Ավագանու կողմ-4, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:
3. Որոշումը մեջ է մտնում հրապարակման պահից:

1.  Ս. Ալեքսանյան

2.  Ս. Հակոբյան
3.  Ա. Խաչատրյան
4.  Հ. Այվազյան

ՈՐՈՇՈՒՄ -- 38

Ղեկավարվելով ՀՀ <ՏԻՄ> օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի առաջին կետով գյուղապետարանի պահուստային ֆոնից 2377.1 հազ. դրամ և ճանապարհային տրանսպորտի ոլորտի 4251 հոդվածից 622.9 հազ. դրամ տեղափոխել գյուղատնտեսության ոլորտի 4657 հոդված համապատասխան ներդրում կատարելու համար:
Ավագանու կողմ-4, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:





1.  Մ. Ալեքսանյան
2.  Ս. Հակոբյան
3.  Ա. Խաչատրյան
4.  Հ. Այվազյան

ՈՐՈՇՈՒՄ -- 39


Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի և <Սոցիալական աջակցության մասին> օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի գյուղապետարանի սոց. ոլորտից տալ դրական օգնություն:

1. Տարոն Սարիբեկյանին – 25.000 (քսան հինգ հազար)
2. Վանիկ Հակոբյանին – 25.000 (քսան հինգ հազար)
3. Ռիմա Աղեկյանին – 90.000 (իննսուն հազար)
4. Գրիշա Պետրոսյանին – 30.000 (երեսուն հազար)
5. Անի Մանուկյանին – 60.000 (վաթսուն հազար)

Ավագանու կողմ-4, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:
Որոշման պահանջի կատարումը վերապահել առաջատար մասնագետ Տ. Աթոյանին:
Որոշումը ընդմիջման մեջ է մտնում հրապարակման պահից:

1.  Մ. Ալեքսանյան
2.  Ս. Հակոբյան
3.  Ա. Խաչատրյան
4.  Հ. Այվազյան

Ծակբար համայնքի ղեկավար՝



Գ. Ավետիսյան

Աշխատակազմի քարտուղար՝



Ս. Խաչատրյան

